



**ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

25 հունիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության Սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովիաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով Արտակ Զեյնալյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Արտակ Զեյնալյանը 08.06.2010թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի սահմանադրականությունը:

2. Դիմումը ներկայացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 27, 28-րդ հոդվածների, ինչպես նաև ՆՏ սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին համապատասխան: Պահպանվել է սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնույթ է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին:

Դիմողը ՆՏ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է՝

1. «Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել Նայասարանի Նանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՆՕ-269-Ն օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթները,

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել Նայասարանի Նանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «Վարչական դատավարության» ՆՕ-269-Ն օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթները»:

3. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դատավարական օրենսդրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն ՆՏ վարչական դատավարության օրենսգրքով է նախատեսված առաջին աստիճանի դատարան հայց ներկայացնելիս միաժամանակ ներկայացնել ապացույց, որ հայցը, այդ թվում՝ դրան կցված փաստաթղթերն սրացվել են հնարավոր պարասխանողի կողմից: Ընդ որում, հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պարճենները պարասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց սրանալը հավասարող փաստաթղթեր կցելը բացարձակ պայման է միայն անձի համար, երբ նա հայց է ներկայացնում վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի դեմ, մինչդեռ վարչական մարմնի կողմից անձի դեմ հայց ներկայացնելու դեպքում ՆՏ վարչական դատարանը լիազորված է հայցն ընդունել վարույթ, եթե բացակայում է անձի կողմից հայցն սրացած լինելը հավասարող ապացույցը, սակայն առկա է միջնորդություն դատարանի կողմից՝ պարասխանողի վերջին հայրնի բնակության կամ գրանցման վայրի համայնքի ղեկավարին ուղարկելու մասին:

Դիմողը գտնում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներով հայցին ներկայացվող վավերապայմանները կամ ձեւական պահանջները ծանրաբեռնում են անձին այն աստիճան, որ սահմանափակում են մարդու եւ քաղաքացու՝ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի բաղադրարարները հանդիսացող՝ դատարանի մարզելիության եւ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իր գործի քննության իրավունքը:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի համաձայն՝ անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումը (այս պայմանը, ի թիվս այլոց, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին կետով): ՆՏ սահմանադրական դատարանն իր ՍԴԱՌ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանների կողմից չի կիրառվել Նայասարանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի

1-ին մասի 7-րդ կետը: Դիմողի փաստարկներն առ այն, որ այս դրույթի սահմանադրականության վիճարկման հիմքն այն է, որ վերջինս համակարգային առումով փոխկապված է սահմանադրաիրավական վեճի առարկա մյուս դրույթի հետ, հիմնավոր չէ հետեւյալ պարզաբանությամբ.

համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սահմանադրական դատարանի որոշումներին ներկայացվող օրենսդրական պահանջներից մեկն էլ սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման ընդունումն է միայն դիմումի առարկայի վերաբերյալ: Միեւնույն ժամանակ, օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի վերոնշյալ դրույթից որպես բացառություն նախատեսել է, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որեւէ նորմարիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաեւ այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված փոխյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Նավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված փոխյալ նորմարիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ այդ դրույթները /«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդված, մաս 9/: Այսինքն՝ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված փոխյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը պարզելու իրավունքն օրենսդրորեն վերապահված է սահմանադրական դատարանին, եւ վերջինս դա կարարում է գործի դատաքննության փուլում:

Ինչ վերաբերում է Նայաստանի Նանրապետության վարչական դատարարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, ապա դիմումի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
 - դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
 - դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում ,
 - դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղաքացի Արարակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ Նայասրանի Նանրապետության վարչական դատարարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի սահմանադրականությունը վիճարկելու մասով գործի քննությունը մերժել:

2. Քաղաքացի Արարակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ Նայասրանի Նանրապետության վարչական դատարարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի սահմանադրականությունը վիճարկելու մասով գործը ընդունել քննության, կազմել գործ, որով պարասխանող կողմ ճանաչել ՆՆ Ազգային Ժողովին:

**Նախագահող
Անդամներ՝**



25 հունիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-17